«ՍԳԿԿ» ԻԿԿ Կարգապահական հանձնաժողովի նիստի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 31-01/02

ք.Երևան,Արշակունյաց 5,417 սենյակ 23.10.2018թ. ժամը 14:00

Քաղաքացի Գարիկ Աշոտի Վաղարշյանի սնանկության գործով կառավարչ Ստեփան Աբրահամյանի `06.08.2018թ. գրությամբ՝ ՀՀ վարչապետին հասցեագրված և 2018թ-ի օգոստոսի 10-ին ՀՀ վարչապետի աշխատակազմից թիվ 02/13.4/24222-18 գրությամբ ՀՀ Արդարադատության նախարարություն վերահասցեագրված և «ՍԳԿԿ» ԻԿԿ-ում՝ 21.08.2018թ-ին ստացված, դիմումի հետագա ընթացքը ապահովելու նպատակով, «Անդրանիկ 97» ՍՊԸ-ի սնանկության գործով կառավարիչ՝ Հակոբ Ասոյանի գործողությունների /անգործության/ փաստերի նկատմամբ, վերահսկողության գործառույթի պատշաճ իրականացման նպատակով, կառավարչի վարքագծի վերաբերյալ, կարգապահական վարույթ հարուցելու և դիմումում նշված փաստական հանգամանքների քննության համար՝ ս/թ-ի Հոկտեմբերի 23-ին ժամը 14.00-ին՝11.09.2018թ-ի հետաձգված և 11.10.2018թ-ին տեղափոխված՝ «ՍԳԿԿ» ԻԿԿ Կարգապահական հանձնաժողովի նիստին.

ԾԱՆՈՒՑՎԱԾ ԷԻՆ՝
Հանձնաժողովի անդամ՝ Հարություն Գևորգյանը
Հանձնաժողովի անդամ՝ Ռուբեն Խալաթյանը
Հանձանժողովի անդամ՝ Հենրիկ Մարտիկյանը
Հանձանժողովի անդամ՝ Արմենակ Ադամյանը
Քաղաքացի Գարիկ Աշոտի Վաղարշյանի սնանկության գործով կառավարիչ՝
Ստեփան Աբրահամյանը
«Անդրանիկ 97»ՍՊ ընկերության՝ սնանկության գործով կառավարիչ Հակոբ Ասոյանը

ՄԱՄՆԱԿՑԵՑԻՆ՝
Հանձնաժողովի Նախագահ՝ Տիգրան Հարությունյանը
Հանձնաժողովի անդամ՝Հարություն Գևորգյանը
Հանձանժողովի անդամ՝ Հենրիկ Մարտիկյանը
Հանձնաժողովի անդամ՝ Ռուբեն Խալաթյանը
«Անդրանիկ 97»ՍՊ ընկերության՝սնանկության գործով կառավարիչ Հակոբ Ասոյանը
Քաղաքացի Գարիկ Աշոտի Վաղարշյանի՝ սնանկության գործով կառավարիչ Ստեփան Աբրահամյանը պատշաճ ծանուցված էր նիստի տեղի և ժամի վերաբերյալ,սակայն անհայտ պատճառով նիստին չէր ներկայացել:

ԼՍԵՑԻՆ – Կարգապահական հանձնաժողովի նախագահ Տիգրան Հարությունյանը ներկայացրեց դիմումը որի համաձայն Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 27.07.2015թ-ի վճռով Գարիկ Վաղարշյանը ճանաչվել է սնանկ, նույն դատարանի 07.08.2015թ-ի որոշմամբ Ստեփան Աբրահամյանը նշանակվել է սնանկության գործով կառավարիչ:
Հանձնաժողովի նախագահ Տիգրան Հարությունյանը ներկայացրեց Ստեփան Աբրահամյանի ներկայացրած բողոքը, կից փաստաթղթերը և սնանկության գործով կառավարիչ Հակոբ Ասոյանից ստացված փաստաթղթերը, առաջարկեց հանձնաժողովի անդամներին քննարկել սնանկության գործով կառավարիչ՝Հակոբ Ասոյանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու հարցը:

ԼՍԵՑԻՆ –«Կարգապահական հանձնաժողովի գործունեության և սնանկության գործով կառավարչի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման» կարգի 4.6. կետի համաձայն ձայնի իրավունք տրվեց Հակոբ Ասոյանին, քանի որ բողոք բերող կողմը նիստին չէր ներկայացել: Սնանկության գործծով կառավարիչ Հակոբ Ասոյանը նշեց, որ ըստ էության

բողոքում կառավարչի որևէ գործողությունից փաստական հանգամանքներ նշված չէ,ուստի ինքը հայտնում է,որ իր բոլոր գործողությունները սնանկության վարույթում կատարել է օրենքի պահանջներին համապատասխան և դատական ակտի պահանջներից ելնելով: Մասնավորապես ներկայացրեց, որ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 04.05.2017թ-ի ԵԿԴ/0046/04/17 որոշմամբ հաստատվել է «Անդրանիկ 97» ՍՊԸ-ի սնանկության գործով պահանջների վերջնական ցուցակը: Նույն դատարանը 20.02.2017թ-ի կայացրել է «Անդրանիկ 97» ՍՊԸ-ի սնանկության գործով գույքն աճուրդով վաճառելու թույլտվության մասին որոշում: Հետևաբար իր պարտականությունների շրջանակի մեջ էր մտնում կատարելու դատական ակտի պահանջը,այն է՝ կազմակերպել՝ ք. Երևան, Մաշտոցի պողոտա, 33/1 շենք թիվ 39 հասցեում գտնվող, «Յունիբանկ» ԲԲԸ-ում գրավադրված գույքի, իրացումը,որը և կատարվել է:

Կառավարիչը նշեց նաև որ բողոքում շարադրված է դատական գործերի վարույթների խրոնոլոգիա,իսկ կառավարչի գործողությունները այդ դատական վարույթներում բացակայում է և կառավարիչը չունի որևէ գործողության պարտականություն դատական գործում որոշում կայացնելու մեջ,այլ ունի միայն այդ որոշումները կատարելու պարտականություն,որը և իր կողմից կատարվել է:

ԼՍԵՑԻՆ – «ՍԳԿԿ» ԻԿԿ Կարգապահական հանձնաժողովի նախագահ Տիգրան Հարությունյանը ձայնի իրավունք վերցնելով արտահայտեց այն կարծիքը, որ ՍԳԿԿ ԻԿԿ Կարգապահական հանձնաժողովը չունի իրավասություն վերանայելու դատական ակտ, քանի որ նրա իրավասությունների մեջ չի մտնում այն:բացի դրանից նա նշեց,որ կառավարչի կողմից տվյալ վարույթում կատարվել են օրենքով սահմանված բոլոր գործողությունները,այն է՝Գույքագրում,գնահատում,իրացում իսկ վերջինը կատարվում է Դատարանի որոշման հիմքով,որը առկա է,այսինքն կառավարիչը տվյալ դեպքում հանդիսանում է որոշում կատարող,որը և իրականացվել է կառավարչի կողմից:Հաշվի առնելքով նշվածը և առաջնորդվելով «Կարգապահական հանձնաժողովի գործունեության և սնանկության գործով կառավարչի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման» կարգի 5.1 կետով, առաջարկեց ՝ հարուցված կարգապահական վարույթը կարճել:

«ՍԳԿԿ» ԻԿԿ Կարգապահական հանձնաժողովի անդամ՝Ռ.Խալաթյանը՝ համաձայնեց Կարգապահական հանձնաժողովի նախագահ Տիգրան Հարությունյանի հետ: Արտահայտեց այն կարծիքը, որ կողմերի ներկայացրած փաստաթղթերի հիմքով պարզ է դառնում, որ այստեղ նույնիսկ եթե կա օրենքի խախտում,բայց կա նաև կայացված դատական ակտեր և Կարգապահական հանձնաժողովը չի կարող այն քննարկման նյութի վերածել: Իսկ Հակոբ Ասոյանը ներկայացրել է Կարգապահական հանձնաժողովին դատարանի կողմից կայացված դատական ակտերը, որով առաջնորդվել է նա՝ գույքի գույքագրման և իրացման աճուրդ կազմակերպելիս: Ուստի առաջարկեց կարճել հարուցված կարգապահական վարույթը:

«ՍԳԿԿ» ԻԿԿ Կարգապահական հանձնաժողովի անդամները համաձայնելով քվեարկեցին:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ՝

Կողմ - 5

Դեմ – 0

Ձեռնպահ – 0

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

1.Քաղաքացի Գարիկ Աշոտի Վաղարշյանի սնանկության գործով կառավարչ Ստեփան Աբրահամյանի՝ 06.08.2018թ. գրությամբ՝ ՀՀ վարչապետին հասցեագրված և 2018թ-ի օգոստոսի 10-ին ՀՀ վարչապետի աշխատակազմից թիվ 02/13.4/24222-18 գրությամբ ՀՀ արդարադատության նախարարություն վերահասցեագրված և «ՍԳԿԿ» ԻԿԿ-ում՝ 21.08.2018թ-ին ստացված դիմումի հիքով «Անդրանիկ 97» ՍՊԸ-ի սնանկության գործով կառավարիչ՝ Հակոբ Ասոյանի գործողությունները/անգործություն/,օրենքներին և կանոնակարգերին համապատասխանության նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը կարող է կարճվել,քանի որ կառավարչի գործողությունները չեն պարունակում

օրենքի կամ վարքագծի կանոնների խախտումներ և կատարվել են «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 47,56 և 76-րդ հոդվածների կարգերով և բխել են նույն օրենքի 82-րդ հոդվածի պահանջների կատարման ապահովման անհրաժեշտությունից և հիմնավորված են 29-րդ հոդվածի 1-ին մասի /ե/ կետով իրեն վերապահված լիազորություններով ու կարգապահական վարույթի ընթացքում նրա մեղքը ապացուցող փաստերի /ապացույցների/ բացակայության պատճառաբանությամբ:

2.Սույն եզրակացությունը սահմանված ժամկետում ներկայացնել Դիտորդ Խորհրդին՝ հետագա որոշում կայացնելու նկատառումով:

Հանձնաժողովի Նախագահ՝ Տ.Հարությունյան

Հանձնաժողովի անդամ՝ Ռ.Խալաթյան

Հանձնաժողովի անդամ՝ Հ.Մարտիկյան

Հանձնաժողովի անդամ՝ Հ.Գևորգյան